ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

2018 թվականի մայիսի 31-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 6-րդ «Բ» դասարանի տարեվերջյան ծնողական ժողովը:

Ժողովին ներկա էին բոլոր ծնողները:

Ժողովը վարում էր դասղեկ Ար.Դավթյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. II կիսամյակի և ուսման տարեկան առաջադիմությունը.

ա) ուսման առաջադիմությունը և ամփոփիչ արդյունքները,
բ) դասագրքերի վիճակը տարեվերջին,
գ) հաճախումների արդյունքները,ընդհանուր բացակայության արդյունքները:

2. Տարեվերջյան էքսկուրսիայի կազմակերպման հարցը

1. Լսեցին.- II կիսամյակի և ուսման տարեկան առաջադիմության հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Ար. Դավթյանը: Նա ամփոփ ներկայացրեց դասարանի բոլոր աշակերտների II կիսամյակի և տարեկան առաջադիմության արդյունքները: Նշեց, որ դասարանում ունեն 3 գերազանցիկ(1.Ավետիսյան Նարե,2.Հովակիմյան Էդմոնդ,3.Վարդանյան Կարեն), և 7 հարվածային(1.Բաղալյան Մարիա,2.Խաչատրյան Սյուզի, 3.Հակոբյան Մերի, 4.Հովհաննիսյան Արմեն,5.Մանուկյան Էդգար,6.Մանուկյան Էդմոնդ,7.Մարտիրոսյան Մարտիկ) աշակերտ: Ներկայացրեց նաև հաճախումների ամբողջ տարվա պատկերը՝ հորդորելով գալիք ուստարում նվազագույնի հասցնել բացակայությունների թիվը, բացակայել միայն խիստ անհրաժեշտության դեպքում:

Առաջարկվեց գալիք ուսումնական տարում ուժեղացնել այդ ուղղությամբ կատարվող բոլոր աշխատանքների հսկողությունը ծնողների և դասղեկի կողմից:

Դասղեկը նշեց, որ տարվա ընթացքում հետևողական է եղել օրագրերի գործածության, հերթապահության,հաճախումների, դասագրքերի և աշխատանքային տետրերի վիճակի ստուգման, համազգեստի, նրա պահպանման, ինչպես նաև դասարանի սանիտարական վիճակի ու գույքի պահպանման հարցում:

Դասղեկը նշեց, որ տարվա ընթացքում VI բ դասարանը ներկայացրել է միջոցառումներ՝ նվիրված Տեառնընդառաջին և «Մեր մեծերը» շարքից մեծ ողբերգակ Վահրամ Փափազյանին, որոնց աշակերտները պատրաստվել և հանդես են եկել մեծ պատասխանատվությամբ՝ բարձր պահելով իրենց դասարանի հեղինակությունը:

Զեկուցողը նշեց նաև ուսման մեջ չառաջադիմող ու թերացող աշակերտների անունները, նրանց վարքի դրսևորման, հերթապահության կատարման, ավագների

աշխատանքի արդյունքները, տվեց դասարանի ծնողական և աշակերտական խորհուրդների աշխատանքի համառոտ ամփոփագիրը:
Դասղեկը նշեց, որ աշակերտները ստացել են ամառային արձակուրդների ընթացքում կատարվելիք առաջադրանքներ, հորդորեց ծնողներին լինել հետևողական, օգնել ձեռք բերել համապատասխան գեղարվեստական գրքերը:

Որոշեցին.- Լինել հետևողական, ամառային արձակուրդների ընթացքում վերահսկել երեխաների ժամանակը՝ հետևելով տնային ընթերցանությանն ու անցած նյութի կրկնողությանը:

Լսեցին.- 2. Տարեվերջյան էքսկուրսիայի կազմակերպման հարցը:

Խոսեց Ար.Դավթյանը: Նա նշեց, որ շատ կարևոր է երեխաների հաճախակի այցելությունը մշակութային օջախներ՝ կրթական մակարդակը հարստացնելու և համակողմանի մարդ դաստիարակելու ընթացքը ճիշտ հիմքերի վրա դնելու համար:

Դասղեկը կարևորելով պատմական այն փաստը,որ Հայաստան աշխարհը տոնեց Սարդարապատի հերոսամարտի 100-ամյակը, առաջարկեց տարեվերջյան էքսկուրսիան կազմակերպել դեպի Սարդարապատի հուշահամալիր:

Որոշեցին՝

Տարեվերջյան էքսկուրսիան կազմակերպել դեպի Սարդարապատի հուշահամալիր, լինել թանգարանում, ծանոթանալ ազգային արժեքներին: Ծնողների քննարկման և միասնական համաձայնության արդյունքում որոշեցին հավաքել որոշակի գումար տրանսպորտի և սննդի ապահովման համար:

Ժողովի նախագահ՝ ..... (Աստղիկ Հարությունյան)
Քարտուղար՝ ..... (Լուսինե Աբելյան)